ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--դեկտեմբերի 2010 թվականի № Ա
քաղ. Երևան

№ՌՌԳ/կ-149 ԵՎ №ՌՌԳ/կ-150/1 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ժդ) ենթակետը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 13-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №28Ն որոշումը և հաշվի առնելով «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի նոյեմբերի 24-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից 2005 թվականի դեկտեմբերի 21-ին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղին տրամադրված ռադիոռելեային կապի գծերի շահագործման №ՌՌԳ/կ-149 և «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի մայիսի 13-ին տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №ՌՌԳ/կ-150/1 թույլտվությունները վերաձևակերպել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության անվամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2011 թվականի հունիսի 21-ը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի մայիսի 13-ին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղին տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №ՌՌԳ/կ-149/1 թույլտվությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի դեկտեմբերի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2010թ.